

Հ Ա Ն Ր Ա Պ Ի Տ Ա Կ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopedie مجموعة علوم

ԽՄԻՍԻՐԱՊԵՏ-ՏԵՌԵՆ

Ղ. ԲՈՂԱՏ

Բ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 20

1898 ՅՈՒԼԻՍ 18

Ամեն ճեղի համար Տարեգրքի կանխիկ 9 դահեկան վեցամսեայ 26, իսկ եռամսեայ 13 դահեկան: Օտար երկրաց համար տարեկան կանխիկ 15 ֆրանկ: Թղթատարի ծախքը կոմպոզիտիւն կը վերաբերի: Հասը 40 ֆրանկ: Գաւառներէ բօսքի բուլ ալ կ'ընդունուի 100 դրուի տակ 105 դրուի:

ԲՈՂԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ղ. ԲՈՂԱՏ. — Հրաւեր մը մեր գաւառացի բաժանորդներուն:

ՄԻՀՐ. — Նորավեպ. — Երկու բարեկամներ:

Ղ. ԲՈՂԱՏ. — Շերամաբոյձներու օգտակար եւ շահաւէտ հրահանգ մը:

Ս. ԱԼԻՍ. — Քուպա:

Ղ. ԲՈՂԱՏ. — Պարսիկագրական կենդանաբանութիւն. — Վնասակար միջատները

Ս. ԱԼԻՍ. — Պտուղներու պահպանումը ձմեռան մէջ:

Ղ. ԲՈՂԱՏ. — Շերամաբոյձութիւնը Բասթօնեան դրութիւնով. — Շերամի հիւանդ

Ս. ԱԼԻՍ. — Գիտական խնդիրներ:

Ս. ԱԼԻՍ. — Զուարճալիք: Հանելուկ թիւ 11:

Բառարան. — Միամտութիւն բացատրուած:

Թղթակցութիւնք. —

Հատը 40 փարայ

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ Ն. Ճ. ՍՐԱՄԵԱՆ

Կ Պոլիս, Մանուկ-փաշա, Բիրիկի խան թիւ 26

ՋՐՕՍԱՆՔ

ՀԱՆՆԵԼՈՒՆ ԹԻՒ II

Վանկով եմ երկու տառերով ճիշտ վեց,
Հասակով փոքրիկ, կ'ըլլամ նաեւ մեծ.
Ունիմ երկու ոտք եւ քեզի նման,
Բայց ոչ հողաթափ՝ եւ ոտից աման:
Չեմ խօսիր բնաւ՝ չունիմ եւ բերան,
Գործովս միայն կը տեսնեմ շատ բան.
Պարզեմ աւելի, ընթերցող ուշիմ,
Ականջ դիր հիմա որ քեզ փայթ յուշիմ:
Առաջին վանկըս՝ է գործ պիտոսի,
Որ ընտանեաց մէջ յաճախ պատահի.
Սակայն միշտ վերջնոյս է յատուկ մի գործ,
Որոնք աւելի վարպետ են ու փորձ:

ԳԵՂԱՄ Կ. ՈՒՆՃԵԱՆ

Լուծումն թիւ 10 Հանելուկի

Երեկոյ էր, տուն գացի,
Հանրագիտակն յանձնեցի
Իմ եղբորս՝ Յակոբին,
Ըսի իրեն. «չա՛տ դիւրին
է այս անգամ հանելուկն,
Դո՛ւն ալ գտիր լուծումն»:
Կարդաց, լուծեց «Ժամացոյց»,
Հանրագիտակն ինձ մատուց:

ՄԱՐՏԻՐՈՍ ԱՐԱՅՃԵԱՆ

ՄԱՐԳԱՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

Կ. Պոլիս, Մերձան փողոց թիւ 57

Հաստատել 1805

ԴԱՍԱԿԱՆ ԳՐԵԱՆՔ

Մանկանց գիրք կամ Հարպիկ փերական
պատկերազարդ. բոլորովին նոր ոճով, Հատը
5 փարայ:

Մարգարիտներ, Մանկապարտէզի-Մաղկոցի
մանուկներուն համար. կ'ուսուցանէ բազմա-
թիւ ձեռագիր օրինակներու վրայ կարդալ
գրել, եւ կը բովանդակէ երգեր, խաղեր,
առակներ եւ հանելուկներ: Գին 40 փարայ:

Սիրուն զբօսարան, Մանկանց երկրորդ
գիրքը, կը պարունակէ մանկական երգեր,
կարճ հատուածներ, առակներ, բարոյայից
փոքրիկ պատմութիւններ եւ անուածներ: Ը
տիպ. Գին 2 զրշ:

Ասկեմասենիկ Հայ տղայոց. երկրորդ գիրք

ընթերցանութեան. Դ. տպագրութիւն 120
պատկերներով. կը բովանդակէ բարոյական
գեղեցիկ պատմութիւններ, ոտանաւորներ,
երգեր, առակներ, կրօնական եւ զիտական
ամենակարեւոր գիտելիքներ, եւայլն: Գիրք
մը՝ արժանի իր անուան եւ պիտանի ամէն
հայ տղայոց: Գին 4 զրուշ:

Մանկավարժական փերականութիւն պատկե-
րազարդ. մասն Ա. Բ. կ'ուսուցանէ՝ պատ-
կերներու վրայ՝ հայ լեզուի քերականութեան
նախագիտելիքը եւ ութը մասունք բանին
100է աւելի մեծ եւ փոքր պատկերներու վը-
րայ: Գին լաթակապով Ա. մասի 50 փարայ.
Իսկ Բ. մասի 100 փարայ:

Սրբազան պատմութիւն հին եւ նոր Կոս-
տանդուպոլիսի, պատկերազարդ. Զ. տպագրու-
թիւն. նախնական կարգերու համար ամբողջ
դասադիրք մ'է: Գին 100 փրջ:

Գեղեցիկ զբօսարան տաճկախօս տղայոց,
կամ Վարժութիւն հայ խօսակցութեան եւ
ընթերցման. Ա. եւ Բ. տարի. պատկերա-
զարդ: Փորձով հաստատուած է թէ մէկ
տարուան մէջ տաճկախօս տղայք կը կարդան
ու կը խօսին հայերէն: Գին Ա. մասի 100
փրջ. Բ. մասի 3 զրշ:

Մարմնամարզութիւն առողջապահական եւ
բժշկական, արանց, կանանց եւ փոքր տը-
ղայոց. առանց գործիքի. բոլոր վարժարան-
ներու յարմար: Գին 4 զրշ:

Հայերէն լեզու կամ վարժութիւն գրաբարի:
Ռոպորդանի գրութեամբ բոլորովին նոր ոճով,
Գին 4 զրշ:

ՎԵՐՋԻՆ ԿԱՐԵԻՌԱԳՈՅՆ ՁԵՎՈՅՑ ՄԱՆ

Ով որ կուզէ վեց տարուան մէջ ուսա-
նելիք Հայ. եւ Յրամա. գրական բարձ-
րագոյն լեզուն, սորվիլ մէկ տարուան
մէջ, դիմել առ Վարչութիւն Հանրագի-
տակի, Արամեան տպարան:

ԴՊՐԱՊԵՏԱՅ ԱԶԳԸ ԼՈՅՍ

Թէ առաւօտեան Սրբազան երգեցո-
ղութիւնք եւ թէ ի գէմն Ս. Պատարագի
երգեցողութիւնք հրատարակուած են,
փոքրիկ դպիրներու համար: Գինը 20
փարա կը գտնուի Վ. Յ. Մարգարեան
գրատունը, Մերձան փողոց թիւ 57:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ



Encyclopedie

ԽՄԻՈՒԳՐԱԿԵՑ-ՏԵՍՐԵՆ

Ղ. ՌՈՒԱՑ

Բ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 20

1898 ՅՈՒԼԻՍ 18

ՀՐԱԴԻՐ ՄԸ

ՄԵՐ ԳԱԽԱՌԱՅԻ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Հանրագիտակի գաւառացի թաժանորդներէն ամենք, մերթ ընդ մերթ գրութիւններ կը զրկեն մեզ հրատարակելու համար, որոնցմէ չափը թաղարմին վերացական նիւթերու չորջը գառնաւնուն, ստիպեալ չենք ուզեր հրատարակել. վասն զի մենք նպատակ ունինք այս թերթի պարունակութիւններով ժողովուրդի անտեսական վիճակը բարեփոխել, գիտութիւնները, արհեստներու կոճիւնները պարզելով, աւսուցանելով, եւ սովորեցնելով այս կերպով անոնց, ըստ կարելոյն, գիւղատնտեսական եւ ուրիշ կարգ մը ճարտարարուեստներու եւրոպական նորանոր գրութիւնները, անասուններ պահել մեծցնելու յարմարագոյն միջոցները, որոցմով կարող ըլլան գիւրութեամբ ընտիր եւ աժան աղբանքներ արտադրել:

Գաւառացիք այս պէտքը շատոնց գգացած ըլլալու էին, եւ փոխանակ զմեր հրաւերին սպասելու, պէտք էր որ իրենց ապրուստի միջոցը եղազ վառաղումներուն կամ արհեստներ վերաբերեալ չգիտցած բաներնուն վրայ մեզմէ տեղեկութիւններ հարցնէին: Մեր Հարց-Պատասխանի գրութիւնը արդէն այս նպատակով հաստատած ենք. ուստի՝ մեր

գաւառացի թաժանորդներու ուշադրութեան կը յանձնենք այս կէտը, որ փոխանակ վերացական գրութիւններու, բարեհաճին միշտ ժողովրդին օգտակար եղազ եւ հացի խնդրով գառաղազ յօգուածներ զրկել մեզ:

Այս մասին անօգուտ չենք համարիր, մեզի քղթակից ըլլալու փափաքով թաժանորդաց ուղղութիւն մը ցոյց տալ, գիտնալու համար թէ, ո՞ր նիւթերու վրայ գրելով Հանրագիտակի նպատակին ծառայած կըլլան:

Նախ ըսենք թէ, ներկայ վեցամեկէն սկիսեալ, Հանրագիտակի մէջ գործածուած Գիտական, Արհեստական եւ Գրական բառերու բացորոշ մեկնութիւնները տուող Բառաբան մը պիտի հրատարակենք, անոնց Գաւառաբարբառներն ալ քովերին նշանակելով. որպէս զի՝ ամեն Գաւառացի Հայու հաւասարապէս հասկնալի ըլլայ Հանրագիտակի լեզուն, եւ այսպէսով իւր պարունակութիւններէն օգտուին:

Ուստի՝ կը խնդրուի ամեն անոնցմէ, որոնք կրնան եւ կը փափաքին այս պարագային մէջ Հանրագիտակի ձեռնուռ գրտնուիլ, բարեհաճին իրենց գտնուած տեղին գաւառական բառերն հաղորդել մեզ: Ի դիւրութիւն իրենց, եթէ ուզեն, կրնան Հանրագիտակի առաջին թիւէն սկսելով, գործածուած բառերուն գաւառական համանիշները հաւաքել եւ զրկել մեզ այժմէն, որ հետզհետէ կարգադրելով, ժամանակին հաս-

ցընենք: Եթէ վեցամսէն առաջ կարողանանք կարգադրել, մաս առ մաս թերթիս կռակը պիտի հրատարակենք, բաւերը հաւաքողներուն անունները նշանակելով:

Բ. Իւրաքանչիւր գաւառի գիւղատնտեսական վիճակը: Հողագործութիւնը, մշակութան արմուկը (ցորեն, գարի, վարսակ եւն.), իրենց տեսակները, տեղական կամ ներածած ըլլալը, տնտես արգասաբերութեան աստիճանը: Հողերու տեսակը ըստ կարելւոյն, (կաւային, տապալտ, կրային եւն.), չարքի կամ անջրգի ըլլալին: Արտերու մշակութիւնը ամեն տարի կը փոխուի՞ն թէ ոչ. զոր օրինակ շատ տեղեր սովոր են այս օրտը ամեն տարի գարի ցտնել տաւնց բացառութեան, այն ինչ արտն ալ ցորեն եւն: Որտեքը աղբելու սովորութիւն կա՞յ թէ ոչ. ե՞րբ եւ ինչպէ՞ս եւ ո՞ր մշակութեանց կը գործածեն: Արտերու մէջ յառաջ եկած վայրի բոյսեր, իրենց անուններով, փաստակար կամ անփաստ: Վնասակարները ոչնչացնելու միջոցներ կը գործածեն թէ ոչ:

Ի՞նչ տեսակ փնտսակար կենդանիներ եւ միջատներ կան մասնաւորապէս իրենց բոյսերը ոչնչացնող նկատուած, եւն եւն: Այս ամենը նաեւ պարտիզպանական ճիւղին համար ալ կը խնդրուի: Պտղատու ծառերու տեսակները, անունները, առնուած պտուղները ի՞նչ եղանակներով կը չահագործեն, անոնց երկարատեւ ըլլալը կամ ոչ, զոր օրինակ, քանի՞ տեսակ խնձոր, տանձ, դեղձ եւն. ունին: Անտառներ ունին, եւ ինչպէ՞ս կը մշակեն (*): Նոյնպէս եւ բանջարեղինաց մշակութիւնները իրենց անուններով, տեսակներով եւն:

Այգեգործութիւն կա՞յ թէ ոչ. ի՞նչ տեսակ որթատունկեր ունին, անոնց իրարմէ ունեցած տարբերութիւնը, հիւանդութիւնները, խաղողներու տեսակները իրենց տեղական անուններով. անոնց գործածութեան եղանակները (գինի, պոստեղ, ռուի եւն.):

Ի՞նչ եղանակով կը պատրաստեն գինին, օղին, քացախը եւն. ի՞նչ գործիքներ ունին ասոնց պատրաստութեան համար. ո՞րքան ատեն կրնան պահել իրենց գինին, եւ ի՞նչ միջոցներ կը գործածեն հինցնելու համար.

Ի՞նչ տեսակ ամաններու մէջ կը պահեն զանոնք:

Անասնաբուծութիւն կա՞յ թէ ոչ, ի՞նչ տեսակ անասուններ կը պահեն (ձի, կով, ոչխար եւն.). մարգագետիններու մշակութիւնը, խոտ հասցնելու եղանակները եթէ կան. կենդանաց հիւանդութիւնները, եւ զանոնք բժշկելու համար գործադրած միջոցներին: Նոյնպէս եթէ կը պարտադրեն շերամաբուծութիւնով, մեղուաբուծութիւնով, եւ ի՞նչ միջոցներ կը գործադրեն:

Քաղցրեւի եւ գիւղական ճարտարարուեստներ: Կաշեգործութիւն, տարազագործութիւն, ներկարարութիւն, պանրագործութիւն, կարագաշինութիւն, ձէթիւղի պատրաստութիւն, անուշահոտութիւններ, վարդի իւղ եւն:

Սրահետագործութիւններ, ոսկերչութիւն, երկրագործական գործիքներու պատրաստութիւն, ատաղձագործութիւն եւն. եւն. գործածուած նիւթերու տեսակները: Եթէ տեղւոյն մէջ գործածուած ո եւ է առարկայի բացատրութիւնը գիւրացնելու համար, անոնց նկարներն ալ գծելով զրկեն մեզ, կը ջանանք ըստ կարելոյն զանոնք տալել:

Վերջապէս, վերոյիշեալ բացատրութիւններէն գիւրութեամբ կարելի է հասկնալ որ, ի՞նչ տեսակ նիւթերով կը փափաքինք զբաղիլ, եւ զբաղեցնել մեր ընթերցողները. եւ եթէ ամեն գաւառէ մերթ ընդ մերթ այս տեսակ գրութիւններ զրկուին մեզ, ամեն անգամ մէկ ճիւղի վրայ զրկելով, մենք ալ տուի՞նք կ'ունենանք անոնց գրութիւններուն ազէկ կամ գէշ կողմերը երեւան հանելով, այս կամ այն գրութիւնները յանձնարարել իրենց:

Մեր բաժանորդները մինակ մեզմէ սպասելու չեն ամեն բան. իրենք ալ մասնակցելու են մեզի, իրենց տնտեսական վիճակը բարգաւաճելու համար: Մենք կրնանք ամեն ճիւղի վրայ երկար բարակ, չոր ու ցամաք դասընթացներ բանալ, բայց զիտնալով որ այդ եղանակը ձանձրացուցիչ է եւ նուազ օգտակար, կը փափաքինք այս գրութիւնով միշտ օրուան նիւթերով զբաղիլ. եւ մասնաւորապէս որ, այս կերպով, ամեն ոք տեղեակ պիտի ըլլայ այս կամ այն գաւառի մէջ, այս ինչ այն ինչ արհեստի կամ մշակութեան եւ

(*) Ածուխի պատրաստութիւն եւն. ինչպէ՞ս կրնեն:

դանակներուն, եւ իրենցինին հետ բողբոջու-
տելով, իրենց սպարաւորի միջոցներու բարդա-
ւածման իրենց ձեռքով նպաստած պիտի ըլ-
լան, անոնց վրայ լայ սփռելով:

Գիտութիւնը՝ հին դարերու մէջ եղածին
պէս գաղտնիք մը չէ այլ եւս: Ձեր արհես-
տի մէջ գաղտնի պահել ուղած մէկ միջոց-
նիդ, անիկա չուտով երեսան կը հանէ: Ուս-
տի՝ ասիկա գիտնալով, ջանաք գիտութեան
աջակցութիւնով մեր արհեստները յառաջ
տանելու միջոցները ձեռք ձգել, եւ այս կ'ըլ-
լայ մեր առաջարկած եղանակով. այսինքն՝
ամեն երկրի գրութիւնները իրարու քով բե-
րելով, եւ իրարու հետ բողբոջուելով, որով,
գեղը ազեկէն կը զատուի, եւ նորանոր մի-
ջոցներ եւ գիտութիւններ յղանալու, հնա-
րեւս գաղտնիքին տիրացած կ'ըլլաք, ահա
այս կերպով պէտք է ուղղուն մեզ հարցում-
ներն ալ մեր բաժանորդներու կողմէ՝ որպէս
զի անմիջական կերպով օգտուին:

Ուրիշ նիւթերու մասին ալ ուրիշ առթիւ
պիտի գրենք, եւ պէտք եղած ուղղութիւն-
ները ցոյցենք: Երանի՜ թէ մերինն պէս
մէկ քանի թերթեր եւս ըլլային, եւ ամենքը
զատ զատ մասնաձիւղերու վրայ գրելով,
փոխանակ ժողովուրդը երազներու աշխարհին
մէջ անօթի ծարաւ տարեցնելու, իրականու-
թեան մէջ, սնոր հացը ճարելու ճամբանե-
րը հարթէին եւ երկրին բարգաւաճման նը-
պաստած ըլլային: Բանի որ գոյութիւն չու-
նին անոնք, առ այժմ մենք կը զրազինք այդ
նիւթերով, որչափ որ կարելի ըլլայ:

Բայց մի մտնաք թէ, այս օգտակար թեր-
թը, ձեզի գիրութեամբ հացի եւ հանդեր-
ձի փարայ վառակցնելու նպատակ ունեցող
թերթը. առաջ տանելու համար ալ ջանքեր
ընելու էք, ձեր բաժանորդագիրները կան-
խիկ զրկելով, եւ նոր նոր բաժանորդներ
գտնելով: Ձանքը՝ երկուստեք ըլլալու է, որ
հաւաստարաւելութիւնը չկորսնցնէ: Ամեն բա-
ժանորդ յոժարութեամբ թող զրկէ իր բաժ-
նէզինը, եռամսեայ կամ վեցամսեայ, ինչ
պարտք որ ունին, ըլլայ քոստայի փողով,
յանձնարարութիւնով եւն. ինչպէս որ իրենց
գիրին կուգայ, այնպէս թող ընեն, բայց
միշտ զրկեն իրենց բաժնէզինը:

Բարեկեցիկ դասակարգն ալ նուէրները
նկէ թող չխորշի՝ աղքատիկ վարժարաններու,

որբեմանքերու, նոյն իսկ աղքատ գիւղերու,
մէյմէկ, երկերկու հատ, որպէս զի՝ Հանրա-
գիտակ ժողովուրդի ամեն խաւերու մէջ մուտ
գտնայ:

Երբ այս կէտին վրայ տեսչափ կը ծանա-
նանք, տեսէք պատճառը ի՞նչ է: Նպատակ
ունինք թերթին աժանութիւնը պահելով
հանգերձ, պրակները հետզհետէ աւելցնել,
բացատրութիւնները գիւրացնելու համար
պատկերները շառցնել: Բայց որովհետեւ ա-
ստիք զրամական մեծ զոհողութիւններու
պէտք ունին, ուստի՝ ժողովուրդը ջանալու
է այս մասին մեր ունեցած գիտարութիւն-
ները հարթել իրեն աջակցութիւնով:

Ղ. ԲՈՒՍ

ԵՐԿՈՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ

Գ.

Երջանիկ ամուսնութեան մը հինգ տարի-
ներէ ետք, իրեն երրորդ տղաբերութեան
ատեն, Տիկ. Ֆուժըռօն մեռաւ, մեռնելէն
առաջ, օրհասի ատեն ունեցաւ ժամ մը կա-
տարեալ հանդարտութեան, քաղցրութեան,
զոր կը օփռէ մահը հրապուրելու համար ին-
չանդհանքեր, եւ ըստ իր ամուսինին, որ
կուլար առանց ծածկելու անկէ արցունքները,

— Իմ տղաքներով թաղման ատեն աւ-
տըս քեզի կը թողում. քու բարեկամք ալ
քեզի կը դարձնեմ:

Կուղովիկս չէր լսեր, մահամբձն ստի-
պեց զանի մօտիկ ընելու իրեն:

— Գիտե՞ս ինչո՞ւ համար Պ. Սէնդ-Լիէ
գնաց եւ չ'վերգարձաւ. ինչո՞ւ համար խա-
ղացող եղաւ: Անոր համար որ քեզի հետ
զիս կը սիրէր. անոր համար որ ես զինքը
չէի սիրեր. մերժած էի զանի, երբ խնդիր-
քդ ըրիր: Կը վտահէր քու բարեկամու-
թեանդ, իմ մերժումիս հանդուրժելու հա-
մար: Իմանալով թէ քեզի կը սիրէի, վախ-
ցաւ որ կը նախանձի եւ հեռացաւ քնաց:
Խաղաց ալ մեր վրայ չ'մտածելու համար...
Գնա՛, կ'ելլայ կըկործանի, իրապէս միշտ
հաւատարիմ ըլլալուն քու բարեկամութեանդ,

որմէ չէր ուզեր երբեք զրկուիլ... Զարիքը անդարմանելի էր, եթէ քեզի ըսած ըլլայի ի՞նչ պիտի ընէիր: Շատ անգամ, կարծեցի թէ գուշակած էիր. կարեկցութիւնդ զինքը նուաստացուցած պիտի ըլլար առանց բժշկելու. քեզի պիտի օգնէ զիս ողբացած տոհմը. նորէն պիտի գտնես զինք:

Լուգովիկոս լացաւ միայնակ հրապուրիչ կընով վրայ զոր կը կորսնցնէր, եւ երբ իր սուգը իր կեանքին վրայ խորապէս ազդեց, որպէս զի ալ չ'վախնար յանկարծակի արցունք թափելէ, ոկտաւ փնտռել իր բարեկամը, որ հապճէպ նամակ մը գրած էր, ի մանուկ իր բարեկամին գլխուն եկածը:

Վենետիկի մէջ անոր հանգիպեցաւ, գիրիկը նետուեցաւ եւ առանց արտայայտիչ խօսքի մը, երկու բարեկամները վերստին գտան այն չքնաղ բարեկամութիւնը, զոր բաժնուած եւ խորհրդաւոր տրամութիւն մը կը սնուցանէր եւ փթթեցնէր ա'լ աւելի:

Լուգովիկոս խօսեցաւ քիչ մը իր սուգին վրայ եւ Ալպէսէ մօտեց մնաց. բայց այն ակնարկներուն մէջ, որոնցմով ամբողջ ստակը կորսնցնող խաղամուր, կը դիտէր յուսահատ ամս պինդ. այս վերջինը կը հասկնար բովանդակ բռնաստեղծութիւնը. այդպիսի զհոգութեան թագուն սրտի մը, զոր խաղին կիրքը թողմեցուցած էր առանց զայն սպաւանելու, եւ սրուն մէջ նորէն երեւան կուգային գործովի կարեկցութիւններ, զիրար սրտանց ճանչնալներ:

Միասին ճամբորդեցին:

Ալպէսէ կ'ուզէր թերեւս իր կործանումը ծածկել, բայց չէր կրնար, եւ վերջապէս ուզեց իմացնել: Իրենց միութենէն եօթ կամ ութ ամիս ետքը, օր մը երբ նիս էին, Լուգովիկոս գուշակեց թէ հէ՛գ Ալպէսդը ինքզինքը կ'ուտէր չ'ձգելու համար իր պահանջատէրներուն եւ վաշխառուներուն՝ հարբստութեան վերջին միացորդը: Ասի ծննդավայր քաղքին դրան մօտ՝ գեղեցիկ պարտէզ մըն էր, զոր իր հայրը հազուադէպ տունկերով ճոխացուցած էր, ուր իր մայրը երազած էր, ուր ինք խաղացած էր, երբ տղայ էր: Զայն ծախել չէր ուզեր, եւ սակայն առանց ծախելու, չպիտի կրնար իր պարտքերը վճարել:

Յուզուող, տանջուող, ջղուտ ու չոր էր:

Ք... ի գրագրին կողմէն մարդ մը եկած էր պարտէզը ծախել տալու համար, եւ անհրկածը անխոհմարար բերած էր տուփի մը մէջ, ծախուելիք պարտէզին մէջէն քաշած մէկ քանի նարնջներ ծաղիկներու փունջ մը:

Լուգովիկոս որ մտիկ ըրած էր գրագրէն զրկուած պաշտօնեային եւ իր բարեկամին միջեւ տեղի ունեցած փոթորկալից խօսակցութիւնը, մակարեւրեց որ Ալպէսդ ինքզինքը պիտի սպաննէր, եթէ պարտէզը ծախէր:

Շատ անգամներ, փորձած էր անոր նուէրներ տալ, Ալպէսդ միշտ մերժած էր զանոնք: Այն օրը զգուշացաւ նոյն ընթացքը բռնելէ, բայց սովորականէն աւելի զուարթ երեւցաւ. եւ Ալպէսդ իր վրդովը սքողելու համար ցոյց տուաւ գեղեցիկ հեգնական զուարթաստեղծութիւն մը:

Ն.

Շրջագայեցան, պատուական կերպով ճաշեցին, եւ ճաշէն ետքը, մեծ սրճարանը գացին: Ալպէսդ Սէնդիլի կոճակին ծակը գետեղած էր նարնջների ծաղիկը. ամենքը հոն կը խաղային, դիտեցին անոնց խաղը.

— Կուգե՛ս, քառդի մը ընենք, յարեց Լուգովիկոս:

— Քովս կուտ մը չկայ, պատասխանեց Ալպէսդ դիւթիչ ժպիտով մը:

— Ուրեմն բան մը չ'տալանք:

— Զխաղանք:

— Կեցիր միտքս բան մը ինկաւ, ըսաւ Լուգովիկոս, զրպանիս մէջ հաւաքածոյիս համար խնդրագիր մը ունիմ, ես զայն դնեմ դուն ալ փունջդ, կ'ընդունի՞ս:

Ալպէսդ իր կոճակին տարաւ ձեռքը, որպէս թէ պաշտպանել կուզէր իր ծաղիկը, յետոյ ծպտելով տրտմազին:

— Շա՛տ լաւ, կը խաղամ, բայց սա պայմանաւ որ, եթէ դուն չահիս պիտի պահես միշտ այս խեղճուկ ծաղիկը:

— Քեզի գալով, պիտի երգուըննաս չայրել ու չպատուել իմ ինքնագիրս:

— Նայիմ որուն վրայ է:

— Եթէ քեզ ցոյց տայի զայն, քու փունջդ աւելի ստորին պիտի գտնէիր, մեր ամենէն բեղուն մատենագիրներէն մէկուն վրայ է:

Ալպէռդ շատ վարանեցաւ, յետոյ գերա-
գրգռուած, քիչ մընալ կարմրեցած վիշտէն
եւ ճաշի գինիներէն, յանկարծ սեղանի մը
առջեւ նստաւ, խաղալու թուղթ մը առաւ եւ
ծածկոյթը պատուելով:

— Ի՞նչ խաղանք:

— Զուգախաղ:

Ամեն սրճարանի մէջ թուղթ խաղալու ա-
տեն միշտ վիաներ կան. դիտեցին մերը. շատ
երկար չտեսց խաղը, Լուդովիկոս կ'ըսէր
կ'ուզէր եւ կ'ըսեցաւ:

— Անգամ մըն ալ խաղա՞նք, հարցուց կը-
թողը, որ սաստիկ բռնուած էր իր մոլու-
թենէն:

— Ո՛չ, ո՛չ, կը բաւէ, ալ ինքնագրութիւն
չունիմ խաղալու համար:

Լուդովիկոս իր բարեկամին տուաւ խաղին
նիւթը պարունակող պահարանը:

Ալպէռդ պահարանը պատռեց եւ անկէ
հանեց հարկուր հազար ֆրանք արծող փո-
խանակազիր մը Փարիզի մէկ պանդային վը-
րոյ քաշուած:

— Ի՞նչ ըսել է ասի:

— Պիտի ուրանա՛ս թէ ծանօթ մատենա-
գրի մը ինքնագիրն է:

— Զեմ ուզեր:

— Անպատճառ պիտի առնես:

— Ասի որոգայթ մը կամ կատակ մըն է:

— Եթէ շահած ըլլայի փնջիկդ կ'առնէի:

— Մէկ ծաղիկի դէմ ահագին հարստու-
թիւն մը:

— Ուրեմն յանգգնէ ինծի ըսել թէ այս
ծաղիկները հարստութեան մը չափ արժէք
չունին քեզի համար, նոյն իսկ կեանքէդ
աւելի:

Ալպէռդ չիկնեցաւ ու ձեռքը ճակտին տա-
րաւ:

— Եթէ քենէ զատ մէկը ինծի ընէր այս
ընծան, պիտի սուլէի անոր:

— Ինչպէս գոչճին մէջ, հէ՛:

— Ո՛հ, Լուդովիկոս Լուդովիկոս...

Ալպէռդ կը կուէր հպարտութեան, սնա-
պարծութեան փորձութիւններու դէմ ակա-
նատեսներուն ներկայութիւնը կը տառապե-
ցընէր զանոնք, բայց նոյն իսկ այս տառա-
պանքը զինք նուաճեց յանկարծ հանդարտե-
ցաւ, եւ կոճակին ծակէն ծաղիկը հանելով,

— Ա՛ռ, բարեկամ, շահեցար, ըսաւ կըթ-
ւողին:

Յետոյ զիրար գրկեցին սրճարանին առ-
դամներուն առջեւ որ շատ գեղեցիկ դուռ
այս դարձուածը:

Պարտեզը չծախուեցաւ, եւ բարեկամներն
ալ իրարմէ չքաժնուեցան:

Թարգմ. Դադիերկեն

ՄԻՂՐ

ՇԵՐԱՄԱՐՅԾՆԵՐՈՒՆ ՕԳՏԱԿԱՐ ԵՒ

ՇԱՀԱԻՏ ՀՐԱՀԱՆԳ ՄԸ

Շերամի բուծումը վերջացաւ. այլիս
ձեր թթենիներու տերեւներուն այնչափ
զգալի պէտք մը չունիք: Ձեզմէ չատե-
րը զանոնք օգտակարապէս գործածած
ըլլալու համար, ընտանի կենդանեայ
կուտան խոտի տեղ: Տարակոյս չիկայ
որ այս կերպով քիչ շատ օգտակարապէս
գործածած կ'ըլլան թթենիներու ար-
տադրութիւնը. բայց ես ալ աւելի չա-
հաւէտ միջոց մը պիտի առաջարկեմ ձեզ,
որով կը յուսամ թէ ամենքդ ալ դո՛հ
պիտի մնաք, որ ահաւասիկ:

Օգոստոսի մէջ քաղցեցէք ձեր թթենի-
ներու տերեւները, մաքուր տեղ մը տա-
րածելով չորացուցէք զանոնք խոտի պէս,
բայց ուշադրութիւն ըրէք որ չի դեղնին
եւ իրենց կանաչութիւնն պահեն ըստ
կարելոյն. յետոյ փսորելով լեցուցէք
մաքուր ամաններու մէջ. զորօրինակ
տակառներու, կամ քարիւղի թիթեղեայ
անտուկներու մէջ (կազի քեմեֆէ), կամ
ուրիշ յարմար ամաններու մէջ, գոցեցէք
բերանին աղէկ մը, եւ պահեցէք այս-
պէս չոր եւ զով տեղ մը: Այս կերպով
պահուած տերեւները կրնաք գործածել
հետեւեալ պարագայներուն մէջ:

Շերամարս ծութեան սկսած ատեն-
նիդ երբ թթենիները եղիամէ զնստ-

ուին, և պէտք եղած քանակութեամբ տերեւ չունենալ տրամադրելի:

Կամ երբ չափազանց անձրևներու պատճառաւ տերեւները շատ խոնավ ըլլան:

Եւ կամ այն տարիները, յորումս և է պատճառով թթենիները շատ լիջ տերեւ կուտան:

Առաջին և վերջին պարագային մէջ, երբ պարտաւորիք այս չոր տերեւները առանձին տալ, պէտք է նախ վրանին լիջ մը ջուր սրկել մարուր տեղ մը տարածելով. սպասել որ թարմ տերեւի կակղութեան հասնին և յետոյ բաժնել թրթուրներուն: Թէև առաջին շրջանին մէջ եղող թրթուրներու համար այս սնունդը կարծր կուգայ, բայց առ ի չգոյէ լաւագունին, կրնաք մինչև ատուհան մը գործածել զանոնք, մանաւանդ երբ շրջանին լրացնելու մօտ են, կամ աղէն իրենց երկբարդ շրջանին մէջ մտած են:

Երկրորդ պարագային մէջ օգտակարութեան կրնաք գործածել հետեւեալ եղանակով:

Մանրուած տերեւները բոլորովին վաշիացնելու է, և խոնավ տերեւներուն վրայ ցանելով այնպէս տալու է թրթուրներուն, որով, թարմ տերեւին խոնավութիւնը չափաւորած ըլլալով, հիւանդութեանց առաջքը առած կ'ըլլաք:

Փորձեցէք այս միջոցը, շատ գոհ կը մնաք: ձեր հասոյթը և հետեւեալ շահերը կրկնապատկուած տեսնելով:

Ն. ԲՈԼՍ

ՔՈՒՊԱ

Այսօր քաղաքական և գիտական

աշխարհը իւր առանձնը Քուպայի Անդիլեան կղզիներու թողութիւն, կողմը ուղղած է: Ուստի անօղուտ չպիտի ըլլայ եթէ Քուպայի վրայ քանի մը աշխարհագրական տեղեկութիւններ տանք և Հանրադատակօթի ընթերցողներուն:

Անդիլեան կղզիք. — Հիսուսային և Հարաւային Ամերիկաներուն մէջտեղը մարդտիրոնման շրջանակաձև շարուած կղզիներու խումբ մը կայ որ Անդիլեան Արշիպելագոս կը կոչուի: Ահա այս կղզիներուն հիւսիսային կողմը գտնուող Լիւգայեան կղզիներէն մէկը, Կիւաւա-հաւին էր, զոր առաջին անգամ գտան Սպանիացիք Քրիստափոր-Կոլումբոսի առաջնորդութեամբը: Դժբաղդ Սպանիացիներ, Անդիլեանէն է որ սկսան Ամերիկայի հարուստ երկրները գրաւել և ահա նորէն Անդիլեանէն է որ Ամերիկայէն վերջնականապէս ձեռք քաշելու վտանգին մէջ կ'իյնան:

Անդիլեան կղզիները Մեծ և Փոքր Անդիլեան անունով երկուքի կը բաժնուին: Մեծ Անդիլեանը չորս կղզիէ կը բաղկանան որոնց ամենէն մեծը Քուպան և Փոթթօ-Ռիգօն Սպանիոյ կը վերաբերին, Հայթին ս: այս երկուքին մէջտեղը կը գտնուի, անկախ երկու հանրապետութեան բաժնուած է, չորրորդը Ժամայիգն է որ Քուպայի հարաւային կողմը կ'իյնայ և Անդիլիոյ կը վերաբերի:

Փոքր Անդիլեանը որ Փոթթօ-Ռիգօնի սկսեալ հիսուսէն գէղի հարաւ կ'երկարին Անդիլիոյ, Գալապոյ, Հոյանաիոյ և Տանըմարգայի տերութիւններուն մէջ բաժնուած է: Հիմակ ձգելով միւս կղզիները, բուն խնդրի ատիժ եղաւ Քուպային վերագտնանք:

*
*
*

Տարածութիւն եւ Բնակիչ. — Քու-

պա երկայնի բարակ, քիչ մը ձուկի նմանող կղզի մ'է. Սարտինիայէն հինգ անգամ աւելի մեծ է, և տարածութիւնը 119,000 հզրմ. քառ. կը հաշուի:

Երբ Քուպա առաջին անգամ Եւրոպացիներուն ծանօթ եղաւ, բնիկներուն թիւը մէկ միլիոնի կը հասնէր. 16րդ դարուն վերջերը բնիկներուն գրեթէ հետըը չմնաց: Հիմաիւտան բնակիչները չորս տարրէ կը բաղկանան: Ափիգայէն բերուած գերիներու զաւակները, ասոնց և Սպանիացիներու միացումէն սերած մեղեգները, բուն Սպանիացիները որք բնակիչներուն 1/10 ըլլալով հանդերձ բոլոր քաղաքային և զինուորական պաշտօնները ստանձնած են. չորրորդ մասը որ աւելի քիչ է և զոր օտարականները կը կաղմեն: Այսօր Քուպայի ընդհանուր բնակիչներուն թիւը 1 1/2 միլիոնը կ'անցնի:

* *

Կիլիսայ եւ Տեղային Բերքեր. — Քուպա Այրեցեալ գօտիին վրայ գտնուող տաք երկիր մ'է. սակայն միւսնոյն լայնութեան սակ եղող երկիրներէն աւելի բարեխառն է (25⁰ սանթ.): Մինակցած տեղերը սառտիկ տաք կ'ընէ և հոն՝ դեղին տենդը մահացու կտորածներու պատճառ կ'ըլլայ:

Քուպա տարուան մէջ երկու եղանակ ունի. անձրեւներու եղանակը՝ որ Մայիսէն մինչև Նոյեմբեր կը տեւէ, և չոր եղանակը՝ Մէկ մ'ալ այս կողմի կղզիները սոսկալի փոթորիկներու ենթակայ են. օրինակի համար 1846ի Հաւանայի մէջ 2000 տուն գետին տապալեց և նաւահանգստին մէջ 235 նաւ ընկղմեց:

Քուպայի կլիման առատ և տղի աղբի բերքեր կը հասցնէ որոնց շնորհիւ այս կղզին հարուստ երկիրներու կարգը

դասուած է: Ուրիշ ոչ մէկ երկիր այնքան մեծաքանակ չաքարեղէգն կ'արտադրէ. Քուպայի սուրճը, բամպակը, գաղաօն և աշխարհահռչակ ծխախոտը հարստութեան աղբիւրներ են: Երկրորդական խել մը բերքեր ևս կան որք արտածութեան մէջ մեծ դեր կը խաղան:

Մետաղի կողմէն Քուպա իւր գրաւի երկիրներու առաւելութիւններովը օժտուած չ'է. հազիւ պղնձի հանքերը յիշուելու արժանի կը դատուի:

* *

Գլխաւոր քաղաքներ. — Քուպայի մայրաքաղաքը կղզիէն հիւսիսարեւմտեան կողմը կանգնուած և Հաւանա կոչուած մեծ և վաճառաշահ քաղաքն է որ 250,000 բնակիչ ունի: Շաքարեղէգնի և ընտիր ծխախոտի արտերը այս քաղաքին շրջականները կը գտնուին: Նաւահանգիստը աշխարհի ամենէն բանտկներէն կը սեպուի. քաղաքին մէջ 125 է աւելի ծխախոտի գործարաններ կան: Հաւանայիին ամենէն մեծ զուարճութիւնը հաստ, երկայն և սև սիկար մը ծխելն է:

Կղզիին երկրորդ քաղաքը Սանթիակո քը Քուպան է որ 120,000 ի չափ բնակիչ ունի և կղզիին հարաւարեւելեան կողմը կարեւոր նաւահանգիստ մը կը կաղմէ: Այս քաղաքին շրջականներն է որ այնքան դիւցաղնագին և արիւնդուշտ պատերազմներ տեղի ունեցան երկու թշնամի բանակներուն մէջտեղը: Դարձեալ այս նաւահանգստին մէջ է որ տեղի ունեցաւ ծովային պատերազմի ամենասոսկալիներէն մին, որ Սպանիոյ շատ սուղի նստաւ:

Մարանգլաւ, հիւսիսային եղբրքը, Փոքր-Փռէնս կեդրոնը երկրորդական քաղաքներ են:

Գալ յօգուածներով փոխթօնիդ օ
և փրկաբան կղզիներուն վրայ կը խօսինք:

ԵԱՆԵԱ

Ա. ԱԼԻՍ

ՊԼՐՅԻՋՊԱՆԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԱՐԱՆՈՒԹԻՒՆ

ՄՐԳԱՍՏԱՆՆԵՐՈՒ ՎՆԱՍԱԿԱՐ ՄԻՋԱՏՆԵՐԸ

Այնթապէն Տիար Ներսէս Գ. Նիկողոսեան նամակ մը գրած էր, որուն պատճէնը գրած ենք Հանրագիտակի 17րդ թւոյն 273րդ էրեսին մէջ, եւ կը խնդրէր մեզմէ, մրգատու ծառերու վնասակար միջատները ոչնչացնելու միջոցները բացատրել: Որովհետեւ այդ կարգի միջատները խիստ բազմաթիւ են, պիտի պարտաւորինք մասնաւոր ձեռք մը բանալ, ամեն մէկ տեսակին վրայ մանրամասնօրէն պէտք եղած տեղեկութիւնները տալու համար: Եւ հասկցողութեան մէջ ալ սխալումներ տեղի չունենալու համար, յարմար դատեցինք Կենդանաբանութեան դասակարգութեան հետեւելով, ամեն միջատի իր պատկանած ցեղին համառօտ նկարագրութիւնը բնելով, նախ ճանչցնել անոնց կեանքը, բարքը եւ սովորութիւնները, եւ ապա այն միջոցները, որոնցմով կարելի պիտի ըլլայ ոչնչացնել զանոնք, որչափ որ զիտութիւնը եւ փորձաւորութիւնը սովորեցուցած է: Վնասակար միջատ մը ոչնչացնելու միջոցը գտնալու համար, պէտք է նախ իր սովորութիւնները, բարքերը, ապրելու եղանակները, պատասխարուելու համար նախընտրած միջոցները լուռ ուսումնասիրել: Բայց ինչ որ աւելայ, որչափ ալ զօրաւոր միջոցներ ունենաք ձեր ձեռքը, այդ վնասակար միջատներուն տճումը արգելելու, միշտ դժուարութեամբ պիտի հասնիք ձեր նպատակին: Որովհետեւ չըմանակի մը մէջ տարածուած վնասակար միջատ մը ոչնչացնելու համար, պէտք է ամեն անհատ հաւատարմաբան ձեռքնաւ գտնուի: Եթէ դուք միայն ձեր պարտկոյին համար աշխատիք, եւ ձեր գրացին անհոգ գտնուի, չեմ ըսեր թէ բոլորովին անօգուտ տեղը աշխատած պիտի ըլլաք, բայց 100 ին 80, մինչեւ իսկ 90 ձեր քան-

քերը ապարդիւն պիտի մնան: Վտանգի երբ դուք մէկ կողմէն ձեր պարտէզը խառնով վնասակար միջատները ազդու միջոցներով իսկ ոչնչացուցած ըլլաք, միւս կողմէն ձեր գրացինն պարտէզէն նորեր պիտի դան: Ուստի երբ կը փափաքիք ձեր պարտէզները ազատել այդ աւերիչ միջատներու տապաւնալութենէն, նախ պէտք է ձեզի համախոհներ գտնաք, եւ այն տոհմ միայն առաջարկուած միջոցը դործողիք, որպէս զի ձեր աշխատութիւնները յաջողութեամբ պսակուին, յուսախար չմնաք, եւ ձեր ծախքերն ալ վրայ չերթան:

Մրգատուները խաթարող միջատները, Կենդանաբանութեան հետեւեալ ցեղերուն կը պատկանին:

- | | |
|-----------------|-------------|
| 1. Պատենաթեւեր | Coléoptère |
| 2. Թեւաթեւեր | Lépidoptère |
| 3. Թաղանթաթեւեր | Hyménoptère |
| 4. Կիսաթեւեր | Hémiptère |
| 5. Երկթեւեաններ | Diptère |

ՊԱՏԵՆԱԹԵՒԵՐ

Այս դասակարգին պատկանող անհատները, իրենց թաղանթակերպ թեւերուն վրայ մէյմէկ կարծր ծածկոցներ կը կրեն պատեանի պէս, ուրիշ եւ առնուած է իրենց անունը. 100,000 ի մօտ տեսակներ կը համարին, որոնք դասաւորուած են 20 ի չափ ցեղերու մէջ: Ամեն ալ զատ զատ յատկութիւններ եւ սովորութիւններ ունին: Ոմանք իրենց անունը կ'առնեն կենդանեաց զիւններէ, այլք աղբերէ, եւ ոմանք ալ բոյսերէ: Մենք պիտի խօսինք մասնաւորապէս այս վերջին տեսակին պատկանողներուն վրայ:

ԲՈՂԵՈՆԵՐ (cetonia). — Ասոնք երկար տեսներ իրր անմեղ արարածներ նկատուած էին: Քանի մը տեսակներ արգարեւ անվնաս կրնան նկատուիլ իրենց ապրելու եղանակով, որոնք կը կրծեն կ'ուտեն վայրի եւ զարդի տունկերու ծաղիկներն, եւ կը վրձեն այսպէս անոնց հաւնութիւնը եւ պտուղները: Բայց այդ տունկերը հացի խնդրոյն մէջ կարեւոր տեղ մը չընեն ինչպէս համար, նուազ նկատողութեան կ'առնուին. եւ այս պատճառով, զիրենք ոչնչացնող միջատներն ալ անվնաս են թաղ-

բուսած են: Այս կարգին մէջ կը դասուին հետեւեալները:

Ոսկեմուկ բնդեռ (*Cetonia aurata* զինա պօսեփի). 1/2 էն 2 հար. մեթր երկայնութեամբ, որուն պատեանները ոսկեշուկանաչ գոյնով կը փափրին, եւ պիտակուած են տեղ տեղ ճերմակ գծերով, որոնք հառուէն պատուածներու երեւոյթը կուտան. իսկ փորը շառագոյն երանգով մը (պղնձի մօտ կարմիր գոյն) կը ցոլցուի:

Վարդի թփեր ւ վրայ խիտ չառ կը գլուխուի, եւ անպագօրէն կը բզկտէ, կ'ուտէ ծաղիկները: Ասոր թրթուրը կ'ապրի թեւաւոր թխազոյն միջիւններու թոյններուն մէջ: Այս վերջինները իրենց բնակութիւնը կը հաստատեն անտառներու մէջ, կամ պարտէզներու մօտ հողին երեսը, կտորտած եւ մանր ստերու գէղերուն մէջ:

Կաղնիի բնդեռ (*C. Speciosissima*). — 2 հար. մեթրի չափ երկայնութիւն ունի, մեծազաւակ կանաչ գոյնով, վերինէն քիչ մը խոշորիկ, կ'ապրի կաղնիի (մեշէ) եւ կնձնիի (գարա աղաճ) ծաղիկներուն վրայ. իսկ թրթուրը փոած փայտի աղբացած փոշիներուն մէջ:

Ասոնց կարգէն են նաեւ Թրեմուր բնդեռ, Մարմարաթոյ բնդեռ, ինչպէս եւ Անրափանց բնդեռ, եւն. հւն. որոց թրթուրները կ'ապրին առհասարակ միջնոց կամ վայրի մեղուներու թոյններուն մէջ:

Աղբակեաց բնդեռներ (*Geotrupes stercorarius* պօս պօսեփի), որոնք իրենց կտրգին չառ մը տեսակներու կը բաժնուին. ու մանք 40 հ. մեթր խորութեամբ ուղղահայեաց ծակեր կը փորեն հորի մը պէս, որոց յատակը հաւկթածեւ եւ անթափանց թոյներ չինելով, իրենց հաւկթները կը զետեղեն անոնց մէջ. վրան կը ծածկեն աղբի փառտութեամբ: Ուրիշներ իրենց հաւկթը կ'ածեն արջառներու աղբին մէջ, ճամբաներու, դաշտերու կամ արօտատեղիներու մէջ, եւ սոքերնովն զլորելով կը կլորցնեն հաւկթը պարունակող մասը, կամրացնեն եւ այնպէս կը տանին հողին տակը ծածկելու:

Այս կարգին պատկանողները ամենն ալ ընտանի կենդանեաց աղբերու մէջ կ'ապրին, թէ իրենք եւ թէ իրենց թրթուրները, եւ

կը ճանչցուն սովորաբար բզէլ անունով: Իրիկունները ընդհանրապէս բզկտով կը թռչելուն, առանց չառ հեռանալու սակայն իրենց իրր բնակարան եւ անունը ծառայող աղբի քակորներէն:

Ահա այս միջակ մեծութեամբ բնդեռներն են որ անմիտ նկատուած են, եւ յիշեցինք հաս, որպէս զի իրենց համասեաններուն հետ չի շփոթուին: Յիշեք նաեւ անցողակի դիւալիւ բնդեռներ, որոնք քանի մը տեսակներ ըլլալով, կ'ապրին սատկած կենդանեաց դիակներուն մէջ, ուր կ'ածեն իրենց հաւկթները, որոցմէ ելած թրթուրներն ալ նոյն պէս իրենց անունը կ'առնեն այդ դարչաւ հոտ նեխած մարմիններէն: Ասոնց կարգէն են մեղեխարաղ բզէլները, որոնք յաճախ կը գտնուին սատկած մուկերու եւ խլարիներու դիակներուն մօտ (դաշտերու մէջ հողին տակ կը), որոց տակի հողը փորելով, կը թաղեն զանոնք աւելի խորունկ, եւ կ'ածեն իրենց հաւկթները անոնց մէջ:

Բայց տեսակ մը բնդեռ կայ, որ կը կոչուի ջոռեակ (*hanneton*) եւ անհամար բազմութիւնով կը գտնուի Եւրոպայի մէջ, ամենեւէն վտանգաւոր պատենաթեւն է: Մարմնայն գոյնը սեւ է, թեւերը, սոքերը եւ պատեանները պղծագոյն են. խղիւղները հողմահարի ձեւ ունին, փորը կը վերջանայ եղջիւրի ձեւով եւ վար ծառ պոչով մը: Ընդհանրապէս կատարեալ միջատը կ'երեւի Մայիսի սիւրբները, եւ խառն բազմութիւնով ծառերուն վրայ կը յարձակին: Ամեն տեսակ ծառ իրենց գործին կուգայ, բաւ է որ տերեւ, ծաղիկ ունենայ, զորս կրճելով կ'ոչնչացնեն:

Պատահած է երբեմն որ, այնչափ խուսերամ խուժած են դեղի մը կամ զիւղերու մէջ, ուր գտնուած ծառերու տերեւներն եւ ծաղիկները մէկ քանի օրուան մէջ ամբողջովին ոչնչացուցած են: Յերկները ծառերուն վրայ հանգարտօրէն կը կենան առանց շարժելու. իսկ զիւրերն բզկտով կը թռչտին, այնպէս որ, յետ չառ բազմութիւն ըլլան իրենց բզկտ մը մինչեւ մէկ ժամ հեռուէն կը լսուի:

Զուգադրութենէ վերջ արւն կը սատկի, որ տեղի կ'առնենայ ընդհանրապէս մայիսի վերջերը. իսկ էգը կ'ապրի եւ ձուածու

Թեան ժամանակ հողին մէջ կը մտնէ, 40 ի չափ հաւկիթ կ'ածէ, 10 ական հատ տեղ տեղ կուտակելով: Հաւկիթները կանեփի հատիկներու չափ խոշորութիւն ունին, եւ ամիսէ մը ճաթելով, ճեւմակ որդ կոչուած թրթուրին ծնունդ կուտան: Ասոնք կատարեալ միջատներէն ալ աւելի վտանգաւոր են. ամբողջ 3 տարի հողին տակը կ'անցունեն իրենց կեանքը, մինչեւ որ կատարեալ միջատի փոխուին: Իրենց ընդհողեայ կեանքին մէջ, առանց բացառութեան հանդիպած արմատները կը ջարդեն անխնայ, եւ կ'ուտեն անյագարար. այնպէս որ՝ շատ անգամներ ամբողջ արտիւր, պարտէպներ սննդացուցած են (*):

Անցնինք այժմ բնդեռներու փոքր տեսակներուն, որոնք երկար տեսններ իրենց համասեռներուն թորի հոգակին շնորհիւ անվնաս նկատուած ըլլալով, երբէք պարտիպաններու ուշադրութիւնը գրաւած չէին: Բայց մօտերս նշանաւոր միջատաբաններ լրջութեամբ ուսումնասիրելով, տեսան որ անոնցմէ մէկ քանինները շատ վնասակար են միջատու ծառերու համար:

Այս կարգէն է մասնաւորապէս *Isajsa stictica* մուկ բնդեռը (*celonia stictica*), 1 հար. մեթր երկայնութեամբ. սեւազոյն մարմին մ'ունի, որ պիտակուած է բազմաթիւ սպիտակ բիծերով: Կ'ապրի ուղտափուշի (*skvle sifkeli*) ծաղիկներու վրայ, եւ շատ անգամներ 3-4 հատ մէկէն խոնելով միեւնոյն ծաղկին վրայ, կը բզկտեն կը լնցնեն, եւ այսպէս ցորենը այդ փաշի հունտերէն կը մաքրեն: Երբ այս վիճակին մէջ կը տեսնէք այս բնդեռը, անշուշտ զայն անփնասներու կարգը պիտի դատէք. բայց ի՞նչ օգուտ որ, իրողութիւնը այսպէս չէ եղեր: Գարնան մէջ՝ երբ խնձորենիները եւ տանձենիները ծաղկին, այդ բնդեռները կը տեղաւորին անոնց վրայ, եւ ծաղիկները կրծելով վիծել կուտան:

Այս է ահա այն պիտաւոր պատճառներէն մին, որով խնձորենին ի սկզբան շատ մը ծաղիկներով բեռնաւորուած կը տեսնէք եւ կը յուսաք թէ, առատ բերք պիտի ստանաք:

(*) Փոփաքելի է գիտնալ թէ, Անաստուի գաւառներուն մէջ ալ գոյութիւն ունի՝ այս ջորեակ կոչուած բզկը, եւ ի՞նչ անուն կոչուած իրեն, ինչպ'ու եւ ուրիշ տեսակներու մասին:

անկէ, բայց ի վերջոյ յուսալսար կ'ըլլաք ձեր սպասածին քառորդն անդամ պտուղ չգտնելով:

Երբ այդ պտղատու ծառերուն վրայ ծաղիկ չգտնեն, անոնցմէ մաս մը այն ատեն կը տարածուին արտերու մէջ, եւ կը թափն ուղտափուշերու ծաղկանց վրայ:

Այս խոյտածամուկ բնդեռը իր հաւկիթները կ'ածէ փտած փայտերու, կամ չորցած հունտերու, տերեւներու եւ ճիւղի մանրաքներու գէղերու մէջ, որոնցմէ ծնած թրթուրները ամբողջ տարին կ'անցունեն անոնց մէջ: Ուստի՝ եթէ աշաղուրջ ծառաբոյժը խնամով իր պարտէզը կամ ծառատանը մաքրէ, եւ այդ տեսակ աղտելի գէղեր չթողու իր ծառերուն շուրջը, բնդեռը իր հաւկիթները տծելու յարմար տեղ չգտնալով, իսկոյն պիտի հեռանայ անկէ, եւ ծառերը պիտի ազատին անոր աւերումներէն:

Տեսակ մ'ալ կայ, Կիսապատեան բզկը կոչուած, 8 հազ. մեթր երկայնութեամբ, եւ յաճախ կը տեսնուի վարդի թփերու վրայ: Անփնաս նկատուած էր մինչեւ ցարդ միջատաւաններու համար. բայց վերջերս ճանչցուեցաւ որ, թուիներու քով տնկուած խաշարները (*այանաֆ*) եւ պարտէզներու շուրջը բոլորուած ցանկերու (*թոֆուս*) ցիցերը (*գազըզ*) արագօրէն կը խաթարէ:

Այս բզկը շատ տեղեր կը գտնուի, մարմինը հաստ է, պատեանները կիսով չափ մարմինէն կարճ եւ տակի կողմէն տափակ են, եւ քիչ շատ քառակուսի ձեւ մ'ունին: Մարմինը սեւ գոյն մ'ունի, բայց բազմաթիւ մանր ճերմակ բիծեր գտնուելով վրան գորշագոյն կ'երեւայ: Էգին փորը կը վերջանայ 3 հազ. մեթր երկայնութեամբ գլխի (*պուրիու*) պէս սուր պոչով մը, զոր կը գործածէ իր հաւկիթները փայտին մէջ գետեղելու համար: Հաւկիթները շուտ մը կը ճաթին, եւ թրթուրները երեւան գալով, փայտը կը կրծեն. եւ խորունկ արահետներ կը բանան միշտ վարէն վեր ուղղուելով, զոր անշուշտ շատերնիդ նշմարած ըլլալու էք թաղուած ցիցերու մէջ:

Այս միջատին աճումին առաջը տանելու համար, Մ. Ֆալու հետեւեալ եղանակը կը յանձնարարէ, որ թէ աժան եւ թէ ապահով է:

Յիցերուն այն մասը որ հողին մէջ պիտի թողուի, ներկելու է կտաւատի խղի մէջ խառնուած կապարի բնածխատով (սպիտակադեղ, խւսքիպեմ), եւ անմիջապէս վրան ցանելու է (չի չորցած), բարակ աւազ ուրիշ վերջը թողելու է որ լաւ մը չորնան հողին մէջ մտնէ առաջ:

Այլ աւելի տալահով կ'ըլլաք եթէ ներկելէ առաջ մէկ քանի օրեր ցիցերը հետեւեալ բաղադրութեան մէջ պտուկեցնէք ամբողջ վին:

Պղնձի ծծմբատ (կիօզ քաշը) 2 քաշ

Պարզ ջուր 100 »

Եւ ներկելէն ու աւազը ցանելէն եւ չորնալէն վերջն ալ վրան քսէք խայծղան (գարսաւն):

(Շարունակելի)

Հ. ԲՈԼՍ

ՊՏՈՒՂՆԵՐՈՒ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

ԶՄՐԱՆ ՄԷՋ

(Պտասխան 59 թիւ հարցման)

Զմրան մէջ ո՞վ չ'ուզեր լաւ պահպանութեամբ պտուղներ համեմել, - կարծեմ ամեն մարդ: Ուրեմն թէ մեր Ռոստոխովի բարեկամներուն գահադաւաճ տալու եւ թէ հանրադատակի սիրելի ընթերցողաց ճանչցնելու համար խօսինք այն միջոցներուն վրայ որոնք պիտի ներեն մեզ ձմեռուան ձիւն ու փութին ժամանակ լաւ պտուղներ ունենալ:

Այն պտուղները որոնք ձմեռը պիտի պահուին պէտք չեն որ իրենց կտաւառեալ հասունութեան հասած լցրան աւելի լաւ է որ թիչ մը տհաս (խամ) բլլան անոնց պահպանումը զխրացնելու համար: Պէտք է զեղեցիկ օր մը ալեք երանելն վերջ պահպանելիք պտուղները ժողովել հատիկ հատիկ ձեռքով եւ ամե-

նամեծ զգուշութեամբ որպէսզի պտուղը չ'վերս որտի եւ զանաւոր զնեւ առ ժամանակեայ կերպով յառաիք յարգով ծածկուած կողովի մը մէջ, ապա տան վերնաշարիկին մէջ փախթի կամ յարդի վրայ իրարու քով շարել ուր պիտի մընան 2 կամ 3 օր: Վերնաշարիկը ուր պտուղները պիտի մնան մի թիչ ժամանակ՝ օդի հոսանք մը ունենալու է, ապա համար բաւական է դէմ առ դէմ դանուած երկու պատուհաններ բանալ: Թիչ ժամանակ վերջ պիտի տեսնէք որ պտուղները թրջուած են: Փախթը կամ յարդը ծծեւով, պտուղները պիտի ցամբին, այդ միջոցին կրնաք պտուղները փախդրել պողպատին մը մէջ:

Պտասխան կամ Մրգապահանքը կը կոչուին այն սենեակները կամ տեղերը որոնք կը ծառայեն պտուղներու պահպանման: Պտղատունը պէտք է որ դրանաւ տան հիւսիսային կողմը: Հաստ պտուղ եւ կրկնակ փեղկեր տնեցող պտուհաններ անհրաժեշտ են որպէսզի կարելի եղածին չափ ներքին բարեխառնութիւնը անփոփոխ բլլայ (+ 2° կամ + 6°):

Ոմանք կ'առաջարկեն որ պտղատունը ստորերկրեայ մուտաններ ըլլան, որոց բարեխառնութիւնը գրեթէ անփոփոխ է: Ուրիշներ կը պնդեն թէ պտղատան մէջ լցար վրաս չ'ունի: Բայց մենք աւելի հաստատու ենք որ ֆրիգապահանքները մուկ խառը բլլան, որովհետեւ սենեակ մը որ լաւ գոյուած ու մուկ է, աւելի բարեխառն է, քան ուրիշ տեղ մը, ուր օդը եւ խոնքը կը մոնան: Երկրորդ՝ լցար եւ տաքութիւնը պտուղները չուտ կը հասունցնեն: Որով պէտք է ջանալ կարելի եղածին չափ պտղատունը մուկ պահել: Երկրորդ համար եթէ պտուհանները փայտէ փեղկեր տնին պէտք է լաւ մը գո-

ցել. հակառակ պարագային մէջ հաստ
և սև վարագոյրներով լոյսին ներս մըտ-
նելը արգիլել ստիպողական է:

Պողատունին մէջ պատերուն վրայ կը
գանուին իրարմէ գրեթէ 25 կամ 30
սանթիմետր հեռաւորութեամբ փայտէ
դարակներ (բաֆ) որոնք սենին 50 կամ
60 սանթիմետր լայնութիւն: Այս դա-
րակներուն վրայ նախ գրէք չոր և մա-
քուր յարդ որուն վրայ կը շարէք պտուղ-
ները, որպէսզի պտուղները իրարու չզը-
պին, իւրաքանչիւրին մէջտեղ կը դնէք
քիչ մը յարդ:

Եթէ պողատունը շատ խոնաւ ըլլայ,
պտուղները դիւրութեամբ կը փտտին
և որովհետեւ գրեթէ միշտ պէտք եղա-
ծէն աւելի կայ, մեծ խոհեմութիւն պի-
տի ըլլայ ամանի մը մէջ քիչ մը ծըծմ-
րային թթու (acide sulfurique) և կամ
պնակի մը մէջ քիչ մը կիւրի քլորուր
(chlorure de chaux) դնել սենեակին
մէկ անկիւնը: Այս մարմինները ջուրի
մեծ անյադութիւն ունենալով, մթնոլոր-
տին մէջ գտնուած առաւել խոնաւու-
թիւնը կը ձգեն: Պողատան մէջ ցորտ
օրերը երբէք կրակ վառելու չէ, իսկ
գեղեցիկ օրերը պէտք է քիչ մը գուռը
բանալ պողատան օդը փոխելու համար:

Ահա՛ ուրեմն միջոց մը որով 5-6 ա-
միս պտուղները կրնաք պահել, պիտի
ըսէք որ մեր նկարագրած պողատան
նման հատ մը ունենալու համար թէ տը-
րամագրի սենեակ ունենալու է և թէ
շատ պտուղ, բայց մի յոսահատիք, քիչ
քանակութեամբ պտուղներ պահելու հա-
մար ուրիշ միջոց մ'ալ կայ շատ գործ-
նական որոյ դիտը կը պարտինք Մա-
թէօ տը Տօմպուլի:

Լորենցի հողագէտ Մաթէօ տը Տօմ.
պալի հնարած պողատանը կը բաղկա-
նայ փոքր փայտէ տափերէ որոնք ունին

60 սանթիմետր երկայնութիւն 40 սան-
թիմետր լայնութեան վրայ և որոյ բարձ-
րութիւնն է 8 կամ 10 սանթիմետր:

Նախ այս տափին մէջ պէտք է դնել
քիչ մը յարդ որուն վրայ իրարու քով կը
շարէք պտուղները: Այս տափերը իրա-
րու վրայ կը դիզուին այնպէս որ երկ-
րորդ տափին յատակը առաջինին իբր
կափարիչ (դաբախ) կը ծառայէ. նոյնպէս
երրորդին յատակը երկրորդին կափա-
րիչն է և այլն, այսպէսով միայն մէկ ու-
րիշ կափարիչի պէտք կ'ունենաք ամենէն
վրան գտնուող տափին համար:

Պտուղները ձմրան մէջ պահելու հա-
մար այս միջոցն շատ պարզ, գործնական
և ածան է և կարելի է 'ի հօրկին մեծ
դիւրութեամբ այս տափերը տեղափո-
խել մէկ սենեակէ միւս սենեակ. նոյն-
պէս այս տափերը իրարու վրայ դիզ-
ուած ըլլալով շատ տեղ չեն բռներ:

Ժամանակէ մ'իվեր պարտիզպաններ
(անշուշտ Եւրոպացի) փորձեցին ալքոոլի
շողիով պտուղները պահել. սակայն հա-
մար գոց սենեակի մը մէջ ամանով ալ-
քոոլ կը դնեն որ շոգիանալով մթնոլոր-
տին մէջ կը տարածուի. բաւական յա-
ջողութիւն գտած են, բայց յայտնի է
որ քիչ մը սուղի կը նստի:

Ուրիշ մեր տրաւագրութեան տակ
ունինք այս միջոցները ձմրան մէջ պը-
տուղները պահելու համար: Ասէն մարդ
թէ՛ երկրագործ թէ՛ արհեստաւոր, թէ՛
պարտիզպան և թէ՛ վաճառական կրնայ
այս միջոցներէն մին ընտրել ու ունե-
նալ պատուական պտուղներ տարւոյն
այն եղանակին մէջ ուր ծառերը զօրկ
են ոչ միայն պտուղներէ այլև տերեւներէ:

Ընդհանրապէս ձմրան մէջ պահուելիք
պտուղներն են խնձոր, տանձ, սերկեղի,
նուռ և այլն և այլն:

Չ'մոռնաք ըսել որ պէտք չէ անփոյթ

ըլլալ երեք միջոցներուն մէջ ալ. գոնէ չարաթը անգամ մը միգապահանոցը այցելել և բոլոր պտուղները աչքէ անցնելով փոտածները նետել որպէսզի քովը գտնուողներն ալ չ'վարակուին:

Պտուղները կախելով կամ օդի հոսանք ունեցող սենեակի մը մէջ դնելով կարելի է չորցնել ու ձմեռը ուտել, բայց քանի որ գրեթէ թորմ կարելի է պահել, ինչո՞ւ զանոնք չոր ու խորշումած ուտել: Կան տեսակներ որոնք կարելի է դիւրութեամբ պահել մեր վերը ցուցուցած միջոցներով. ուրիշներ ալ կան որ գրեթէ բնաւ չենք կրնար պահել, դիւրաւ կը փոտին, այս տեսակները միայն դործնականը մեզ կը ցուցնեն՝ որոնք այն ժամանակ կրնանք ընտրել դիւրին պահող պտուղները:

Կարծենք թէ աւելորդ չ'պիտի ըլլայ եթէ մէկ երկու խօսք ալ ըսենք խաղողի պահպանման համար:

Խաղողը ձմեռն մէջ պահելու համար, երեք միջոց կայ.

Առաջինը, որ ամենէն հինը և շատ պարզ է՝ կը կայանայ խաղողին ողկոյդները ձեղունէն կախելուն մէջ. այս միջոցով ձմեռը կ'ունենանք խաղող բայց չոր և խորշումած (չամիչը):

Երկրորդ միջոցով խաղողը կարելի է պահել այնպէս որ իւր արտաքին տեսքին վրայ գրեթէ փոփոխութիւն մը յառաջ չ'գար և երբ տեսնանք այս կերպով պահուած ողկոյդ մը խաղող, կրնայ մեզ թելիլ թէ դեռ նոր այգիէն բերուած է: Անոր համար խաղողի ողկոյդին հետ 20 սանթիմետր երկայնութեամբ ճիւղը միասին կը կտրենք եւ զանոնք պատուհանները բաց սենեակի մը մէջ յարդի վրայ կը շարենք մէկ երկու օրի չափ: Յետոյ իւրաքանչիւր ճիւղ կը դնենք զատ զատ շիշերու մէջ (խաղողի կոյր շիշէն դուրս ձգելու պայմանաւ) որոնք ջուրով լեցուն

են. ջուրին յատակը պէտք է ձգել ածուխի կտոր մը որպէս զի ջուրը չ'տարբաղագրուի կամ չ'նեխի: Ծիւղին միւս ծայրը՝ որ օդին մէջ կը դանուի, կը թաթխենք մեղրամամի և կամ ու է նոյնատեսակ մարմնոյ մէջ, այսպէսով ջուրը կը շոգիանայ. վերջապէս պէտք է ժամանակ ժամանակ մեծ զգուշութեամբ ջուրը փոխել:

Այս միջոցով խաղողը կը մնայ 4-5 ամսոյ չափ կանաչ և բոլորովին թաշմ: Եթէ ձմեռը քիչ մը խիստ է, լաւ է այս շիշերը բարեխառն տեղ մը դնել որպէսզի ջուրը չ'սառի և բոլոր աշխատութիւնը պարապը չ'երթայ:

Նոյնպէս պարաիզպաններ փորձեցին խաղողին կոյզերը պահել ալքոլի մէջ, բայց այս միջոցը շատ սուղի կը նստի, ուրով գրեթէ անգործածելի:

Վերջապէս կարելի է ուրիշ միջոց մ'ալ գործածել որ խիստ պարզ, գործնական ու դիւրամատչելի է: Առէք փայտէ սընտուկ մը՝ որուն յատակը լեցուցէք կէս սանթիմետրի չափ թեփ կամ փայտի սղոցուք (sciure de bois): Ողկոյդներու վրայ գլուխուած փոտուն հատիկները նետեցէք ու միւսները իրարու քով շարեցէք թեփին կամ փայտի սղոցուքին վրայ. յետոյ վըրան լեցուցէք դարձեալ թեփ՝ որուն վըրայ պիտի շարէք ուրիշ ողկոյդներ և յաջորդաբար. այս միջոցով ալ կարելի է բաւական ժամանակ թորմ պահել. միայն շատ անգամ խաղողը փայտէն քիչ մը անախորժ հոտ մը կ'առնու:

Կը տեսնաք որ միջոցներ չեն պակսիր պտուղները ձմեռը պահելու համար, ուրոնց մին կամ միւսը կրնաք ընտրել:

Ռօստրօ

Մ. ՄԱՆԱՔԵԱՆ

ՇԵՐԱՄԱԲՈՒՅՈՒԹՅՈՒՆԸ

ԲԱՍԹԵՕՈՒԵԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆՈՎ

ՄԱՍՆ Բ.

Շերամի հիւանդութիւնները

(Շար. 8-ի 15)

Շերամորուծութեան վրայ խօսող գրքեր, շատ մը հիւանդութիւններ կը նշանակեն, որոնք մեծ մասամբ կարեւորութիւն չունենալուն, հոս պիտի խօսինք մեծ միայն անոնց վտանգաւորներուն վրայ, որոնք երկու տեսակի կը բաժնուին. այսինքն՝ պատահական հիւանդութիւններ եւ մակաբուժանքին փոխանցիկ հիւանդութիւններ:

Պատահական հիւանդութիւններ

Գալուկ (*) — Այս հիւանդութենէն բռնուող շերամները կ'ուռենան, եւ իրենց ամբողջ մարմինը դեղին գոյն մը կ'ստանայ. հետքահետէ շարժումներն կը տկարանայ, չեն կրնար քաշել, ստերիններն ներս կը քաշուին. վերջապէս, անորժակներն դրցուելով, այլեւս չեն ուտեր եւ կը մեռնին:

Այս հիւանդութիւնը կը վերադարձի արտաշնչութեան պակասութեան. որովհետեւ շերամները կանաչ եւ ջրոտ սնունդ մ'ուռնելով հանգերձ, թէ չեն միգր, եւ թէ իրենց կողիւնքն ալ չոր դուրս կ'ելլայ, որով իրենց սնունդին հետ ներմուծած ջուրը, միայն մարմնոյն ծախտիկներէն դուրս կ'ելլայ շողիւնալով. ոհա այս պատճառով, երբ թրթուրներուն շատ խոնաւ սնունդ մը տրուի, ջուրին մէկ մասը չի կրնալով արտահանել, իրենց մարմնոյն մէջ կը մնայ, եւ վերոյիշեալ հիւանդութիւնը յառաջ բերելու պատճառ կ'ըլլայ: Ուստի՝ պէտք չէ երբէք թրթուրներուն տհաս, կակուղ եւ ջրոտ տեսակներ տալ: Եւ երբ բուժարանին մէջ դաշուկը յառաջ գայ, պէտք է ըստ կարելոյն շերամատուներ հովհարել եւ թրթուրներուն բաժնել նուազ ջրոտ տեսակներ. զոյգօրինակ վայրի թթենիի տերեւներ, որոնք միշտ ա-

ռողջ սնունդ մը կը կազմեն, եւ որովհետեւ վերելքէն քիչ օր առաջ տեղի կ'ունենայ այս հիւանդութիւնը, վերոյիշեալ միջոցներով անմիջապէս առաջը կ'առնէք, եւ առանց մեծ կորուստ մը պատճառելու կ'անհետանայ:

Ոսիմալս, գոտրքիւն կամ ցիւրալքիւն. — Այս հիւանդութենէն վարակուող թրթուրները տկար, ազաւուն եւ միշտ յետամնաց կ'ըլլան: Ախորժակ չեն ունենար, եւ անոյթ ըլլալով, չեն կրնար քաշել, եւ տերեւներուն վրայ ելլելով ուտել: Եւ եթէ իրենցմէ ու մանք տերեւներուն վրայ ելլել ալ փորձեն, առողջ եղողները, իրենց չարժման արագութեամբ վար կը ձգեն, որ անկողնոյն վրայ մնալով, միշտ միաներին մէկ-երկու օր վերջը կը խորխորան: Շատ անգամ վերելքէն առաջ կը մեռնին. եւ եթէ ոմանք յաջողին վեր ելլել, առանց խոզակ պատրաստել կարողանալու կը մեռնին:

Այս հիւանդութիւնը յառաջ կուգայ երբեմն, երբ թրթուրները պլպլելախսի (pébrine) դարա թապան) մանրէսերմեր կը պտուռնակեն իրենց մէջ: (Այս պարագային՝ կորիկ է ստուգել, հիւանդոտ թրթուրներէն մէկ քանին մանրագէտով քննելով, որու մասին ընդարձակօրէն պիտի խօսինք): Ուրիշ անգամներ պատահական եւ անձանոթ պատճառներով յառաջ կուգայ. ուստի՝ վարակուած թրթուրները պէտք է հետզհետէ մեկուսել եւ առանձին սեղաններու վրայ խնամել: Այս մեկուսումը երբէք մոռնալու չէ, որովհետեւ ինչպէս առաջները ըսած ենք, միեւնոյն բուժարանին վրայ տարբեր տարիքով թրթուրներ սնուցանելը՝ մեծ դժուարութիւններ յառաջ կը բերէ: Երբ ոսիմալտէ վարակուած թրթուրներ տեսնէք սեղաններուն վրայ, որոնք խորխոցման առնել յետամնաց ըլլալով արթուն կը մնան. ճիշտ այս միջոցին ծակուողէն թղթերու վրայ տերեւներ տարածելով զրէք թրթուրներուն վրայ ուշադրութեամբ. անտաժէտ թրթուրները տերեւներու հոտէն վեր կը բարձրանան եւ թուղթին երեսը կ'ելլեն, որ կը տանիք առանձին սեղանի մը վրայ վետեղելու, եւ հոն տաքութեան աստիճանը բարձրացնելով մասնաւոր խնամք կը տանիք: Բուժարաններու վերի սեղանները աւելի յարմարութիւն ունին այս անտաժէտ թրթուրներ

(*) կամ parvitas:

րուն. ուր տաքութիւնը միշտ բարձր կ'ըլլայ:

Այս առաջին մեկուսութեամբ յետամնացները ամբողջովին գտած կ'ըլլանք: Խորխացու- մէն յետոյ, երբ գործողութեան միջոցին քը- նացող թրթուրներէն շատը արթնցած են արդէն, երկրորդ մեկուսութեամբ մ'ալ պէտք է ընել, որով կանխահասները գտած կ'ըլլաք. եւ սեղաններուն վրայ կը մնան այն ատեն միջնակ թրթուրները: Եւ այն ատեն 3 դա- սակարդը առանձին առանձին իրենց վիճա- կին համեմատ խնամելով, մէկ խորխացու- մէն միւսը իրարու կը հաւասարին, եւ շե- րամատան մէջ կարգապահութիւնը կանոնա- ւոր ըլլալով, աշխատութիւնները կը դիւրա- նան: Արդէն լու խնամուած շերամատան մը մէջ երբեք ոսինխտէ վարակուած թրթուր- ներ գտնուելու չէ. հակառակ պարագային, շերամարոյծին անհոգ կամ անգէտ ըլլալը կ'ապացուցուի:

Թափանցիկութիւն. — Այս հիւանդութե- նէն վարակող թրթուրներուն մարմը քիչ շատ թափանցիկ կ'ըլլայ եւ փայլուն կ'երե- ւայ, մանաւանդ գլխուն վրայ, որ մարմ- նոյն նկատմամբ չափէն աւելի կը խոշորնայ:

Թափանցիկ թրթուրները ակորժակ չեն ունենար, օրըստօրէ կը հիւծին, կը տկարա- նան եւ կը թունան, փոխանակ մեծնալու, աւելի կը պղտրկնան. այսու հանդերձ իրենց խորխացումները կը կատարեն. բայց չորրորդ շրջանէն վերջ կ'ուռենան եւ կծիծի կը փոխ- ուին առանց խողակ չինելու (տես Հանրագ. երես 241):

Այս հիւանդութիւնը ոմանք կը վերագ- րեն խնդու մի, այսինքն՝ միեւնոյն սեղանի վրայ պէտք եղածին շատ աւելի թրթուր գտնուելուն, եւ անդեան նուազութեան կամ առողջապահիկ միջոցներու պակասու- թեան: Բայց ուրիշներ ալ կ'ըսեն թէ՝ փը- տախտի կամ պղտրկութեան այլափոխուած մէկ տեսակն է: Ինչ որ ալ ըլլայ սակայն, վերը յիշուած միջոցներով միշտ կարելի է վտանգը թիթեւ կերպով անցնել:

Պատահական հիւանդութեանց գլխաւոր- ներն եւ ամենէն կարեւորներն են ասոնք, որ ինչպէս ըսինք, առողջապահիկ միջոցներով երբեք շերամատան մէջ գոյութիւն չ'են ու- նենար: Զրազինք այժմ մակարածային հի- ւանդութիւններով, որոնք գրեթէ կէս դարէ

ի վեր ամբողջ շերամաբուծական աշխարհի մէջ աւեր ու քանդ գործեցին, հարուստ շե- րամարոյծներ անանկացուցին:

(Շարունակելի)

ԳԻՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

2.

Գոյի հարկւրաւոր թիւ մը որ հետեւեալ պայմաններն ունենայ,

1⁰. Թուանշանաց գումարը թիւէն 21 ան- դամ փոքր լինի:

2⁰. Աջակողմեան երկու թուանշանէն ձեւա- ցած թիւը հարկւրաւորին 26 անգամը լինի:

3⁰. Եթէ թիւը իր չրջուածէն հանուի 495 մնայ:

S. ՊՕԶԱԾԵԱՆ

ԽՈՀԱՆՈՑԻ ԲԱԺԻՆԸ

Սերկեւելի շուռուպ

Խնամով սրբեցէք սերկեւելները առանց լուալու. չորս մասերու բաժնեցէք եւ քիչ մը ջուրի մէջ եփեցէք, այնքան որ՝ յարդի չիւլ մը սերկեւելներուն մէջ կարողանաք մխել դիւրութեամբ: Յետոյ լաթի մը մէջ դնելով ձգմեցէք, բայց ոչ այնքան ուժով, կշռեցէք այժմ՝ այդ հիւթը, եւ միեւնոյն ծանրու- թեամբ չաքար առէք, իրար խառնեցէք եւ եփեցէք մինչեւ որ շուռուպի թանձրութեան հասնի:

Երբ քիչ մը պաղի չիչերը քաշեցէք:

Լիւմինի շուռուպ

Լիւմինի արտակեղեւը (այսինքն՝ դուրսի դեղին կեղեւը) բարակ քերոցէ (ռեւեկ) մ'անցուցէք, 2 լիգրա ջուրի մէջ եռացու- ցէք, այս խաշածոն ձարմաղէ (ւազիւնաղ) մ'անցուցէք: Լիւմինները (որոնց արտակեղե- ւը առկ) սեղմելով, պարզուտէ մը քամե-

ցէք: Ձ քիւ չաքար ամանի մը մէջ դնելով վերը յիշուած խաչածոն վրան աւելցուցէք եւ եփեցէք: Այս շուռուպին թանձրութիւնը հասկնալու համար, նախ՝ մատերնիդ պաղ ջուրի մէջ թաթխեցէք, յետոյ շուռուպին մէջ մխեցէք եւ անմիջապէս նորէն պաղ ջուրի մէջ թաթխեցէք, ըթամատերնիդ եւ ցուցամատերնիդ սեղմեցէք ու բացէք, եթէ մատերնիդ վրայ գտնուած շուռուպը ճարձատէ (չաթ չաթ ընէ), այն ատեն որոշեալ թանձրութեան հասած է: Վար սաէք կրակէն եւ խկոյն խառնեցէք վերը յիշուած լիմօնի հիւթը, թողուցէք որ պաղի եւ շիշերը բաշեցէք:

Խաբուսիկա հայսս լուսն (եաշանճը լոմա)
Առէք ընտիր տեսակէ խիստ մանր խընձորներ, լուացէք եւ խրաքանչխր խնձորին կոթին կողմէն շերտ (սխիւ) մը կտրեցէք հանեցէք խուփի (խափախ) մը պէս. յետոյ միջուկը հանեցէք, անանկ որ խառչ մը ձեւանայ, տաւնց սակայն տակի կողմը ծակելու: Դրէք ամանի մը մէջ եւ լեցուցէք վրան գաւաթ մը օղի, լիմօնի մը արտակեղերը (պէտք է քերցէ (ռեմսե) անցնել), եւ քիչ մ'ալ դարձինի: Կէս ժամու չափ թողուցէք. յետոյ խնամով խնձորները ցամքեցուցէք, լեցուցէք այժմ խնձորներուն մէջ ծիրանի կամ ո եւ է պտուղէ պատրաստուած խիւսանոյշ (հզմե) եւ հաւկիթի մը դեղնուցը քիչ մը ալիւրի հ'տ խառնելով, խնձորի խուրքերուն վրայ քսեցէք եւ զգուշութեամբ դրէք խնձորներուն վրայ, դոցեցէք տաւնց ձեղք մը ձգելու: Երբ այս գործողութիւնը տւարտի, թաթխեցէք բանդակի խմորին մէջ (Տես. Հան. Թիւ 19), եւ միւսնայն գործողութիւնով վերջացուցէք:

ԱՐԱՔՍ

ՁՈՒԱՐԱՆԻՔ

Սիրելիս, չէք գիտեր թէ Ձեր թերթը ինչ մեծ ծառայութիւն կը մատուցանէ ինձ:

— Ի՞նչ կըսէք բարեկամս. կը շողբորթէք զիս:

— Ո՛չ, ընդհակառակը. վասն զի երբ որ անհանգիստ եմ. կ'սկսիմ թերթը ձեռքս առ-

նել եւ 15 վայրկեանէն խկոյն քուս կը տանի:

* *

Բժիշկի մը ազգարարեց որ ի դիւրութիւն իւր յաճախորդաց իւր բնակութիւնն փոխադրած է գերեզմանատան քովը: — Կեցցեն այս տեսակ բժիշկները:

* *

Գերմանացի հաշուագէտ մը կըսէ թէ 3,000 տարի վերջը 220 կանանց մէկ այր միայն պիտի մնայ. — Օրիորդները չիմանան:

* *

Յաճախորդը. (կենաց ապահովողութեան գործակալին). — Այս ապահովագրութեան դրամը շատ մեծ բեռ մ'է մարդուս համար, մանաւանդ եթէ 30 կամ 40 տարի տակաւին ապրիմ:

Գործակալը. — Մի՛ վախճար բարեկամս. արդէն ապահովագրութեան դրամը վճարելու համար, չարաչար աչիս տաւքնիդ զՁեզ շատ մը կը մեռցնէ:

ԲԱՌԱՐԱՆ

ՄԻԱՍՏՈՐԷՆ ԲԱՅԱՏՐՈՒԱԾ

Ամբիծ — Գտնատ նէ՛ ինձի խնայուր:

Ամուսին — Եթէ աղէ կ'ին վիճակիս՝, երանի քեզ:

Ամուսնանալ — Յաճն տա կոյր ու խուրըլլ եթէ հարուստ ես, իսկ եթէ աղքատ՝ խորհորդ կուտամ տեղդ ծանր նստէ:

Ամուրի — Ձաւակ չունեցող:

Ամապղլիս — Հոգ ու մտմտութեամբ պատճառող օր:

Ամսական — Թաղական ըլլամ, վարժապետները խահվէ օճախին երկու երեք ժամ չ'ապացուցած չեմ տար:

Ամօթ — Ամէն տեղ բարա չ'ըներ:

Այրի — Անկախ:

Այցելութիւն — Որոյ միջոցաւ մայրեր իրենց աղջիկները ամուսնացնել կը յուսան:

(Շարունակելի)



ՄԵՍ ՄԹԵՐԱՆՈՅ ԴԵՂՕՐԷԻՑ

Լ. ԱՐՍԼԱՆԵԱՆ ԵՒ Ս. ԷՄԻՐՁԷ

Կ. Պոլիս Գնահատում իսկ թիւ 3
Սոյն վաճառատուն պատրաստ է մատա-
կարարել մեծ ու փոքր քանակութեամբ՝
ամէն տեսակ թարմ դեղորայք։ Վիրա-
բուժական գործիքներ, Անդղիական և
Փաղղ. պատրաստ դեղեր, գօնեակներ,
գինիներ և հանքային ջուրերու մեծ
մթերք մը, յարմար գներով։ Լ. Արսլան-
եան և Ս. Էմիրզէ Ընկերութիւնը երկար
ատեն անձնական փորձառութիւններ
ունին։ Ամեն ջանք և աշխատութիւն չեն
խնայեր իրենց յաճախողներն դոհաց-
ներու համար, մասնաւոր ուշադրութիւն
կը հրաւիրենք գաւառաց համար, որոնց
կը զրկեն դեղորայք, ամենայն արա-
գութեամբ, թարմ և մաաչելի գներով։
Զարածի միւլկներու և յուերու ևն.
համար միջատասպան փոշի Poudre in-
secticide մեծաքանակ բերել տուած են
ուղղակի ծալմացիայէն, որուն համար
մասնաւոր ուշադրութիւնը կը հրաւի-
րենք յարողոյ հասարակութեան։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԲ

Կեյվէ-Դընըրլար. Կ. Շառլեան. — Շնոր-
հակալութեամբ ստացանք Ձեր նամակը,
գոհ ենք որ գործակալութեան պաշտօնը
ընդունելու հաճած էք։ Հանրագիտակի 1-4
թիւերը պիտի ընդունիք։
Նանեա. Ա. Խորիկեան. — Ստացանք Ձեր
նամակը եւ ներփակեալ ձեռագրերը. շնոր-
հակալ ենք որ մեզ աշխատակցելու փափաք
ունիք։ Ձեր լուծած թուաբանական խնդիրը
ձեռք է։
Հասըլ-Բեոյ. Պ. Տատեան. — Ձեր նա-
մակին կ'սպասեմք. գրեցէք։

Ռոսնոթո. — Մ. Կ. Մալաքեան. ստա-
ցանք, շնորհակալութիւն։

Տիւզնէ. Ն. Նշանեան. — Նշանակեցինք
զձեզ բաժանորդ 15րդ թիւէն սկսեալ ինչ-
պէս գրած էիք մեզ, շնորհակալութիւն։

Իսկ գալով Ֆրանսերէնը ինքնօգնութեամբ
սովորելու գրքի մը, կը յանձնարարուի
ՄԱՅՍԹԵՐՇԱՖԻԹի դրութեամբ հրատարակ-
ուած գիրքը, որ կը գտնուի Մարգարեան
գրատունը 15 տետրեր է, գեղջեալ 25 դրշ.
9 հատը լոյս տեսած է։



ՀՈՆԿ-ԲՈՆԿ-ՍԷՅԼԱՆ-Կ ՊՈԼԻՍ

ՄԵՍ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԹԷՑԻ

ՆԱՎՐՈՒԵԱՆ ԵՒ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ձեյալ Պէյ խանի դրան կից, թիւ 10

Ամենէն լաւ թէյերու ամենէն ընդար-
ձակ վաճառատունը Կ. Պոլսոյ մէջ, որ
ճիւղեր ունի Օսմ. Տէրութեան ամէն
կողմերը։ Գաւառներու յանձնարարու-
թիւնները փութով և խնամով կը կա-
տարուին։

Չինական, Հնդկական, Ճապոնի և Սէյ-
լանի էն ազնիւ թէյերն ուղղակի բեր-
ուած, կը գտնուին հոն։

Չգուշանալ սոյն վաճառանիչին կեղ-
ծերէն։

Փնտուել ՆԱՎՐՈՒԵԱՆ ԵՒ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ
Ստորագրութիւնը։

Ա. Զ. Դ.

Հանրագիտակ կը հրատարակուի ամեն Շաբաթ օր կանոնաւորապէս :
Կը պարունակէ Գրական, Գիտական, Երկրագործական, Տնտեսական, Արհեստական, Եւայլն, Եւայլն. շահեկան նիւթեր :
Երկրագործական, Արհեստական և Իրաւաբանական հարցումներու միշտ պատասխանները կը տրուին մասնագէտներու ձեռքով :
Բաժանորդագրութիւնք և թղթակցութիւնք ուղղելի են առ

ՏՏօրէն—Խմբագրապետ Դ. ԲՈԼՍ

Կ. Պոլիս, Մանուկ փառա, Գիւրգիս խան Արամեան Տպարան, քիւ 26

Թերթիւս վերաբերեալ մնացեալ գործառնութեանց համար դիմել

Գրավաճառ ՄԱՐԳԱՐԵԱՆ ՎԱՀՐԱՄ ԷՔԷՆՏԻԻ

Կ. Պոլիս, Մէրհան Զարգար քիւ 57

Հանրագիտակ՝ պատրաստ է ընդունիլ ամեն տեսակ ծանուցումներ, ազգաւորութիւններ, իրատ գիւրամատչելի պայմաններով : Հրատարակիչներէ կը խնդրուի իրենց երկերէն զրկել երկու օրինակ, զոր պիտի ազգարարենք հասարակութեան, կարեւորներուն վրայ ընելով մեր քննադատումը :

ՍԽԱԼ Է ԸՍԵԼ

ՔԷ՝ Պօզանեան ԷՔԷՆՏԻԻ Դ.Ա.ՍԱ.ԳԻՐԲ
ԹՈՒՍ.ԳԻՏՈՒԹԵԱՆ անուն գիրքը
ալ չի գտնուիր :

ՆՈՐ ՏՊՈՒԵՑԱԻ

հազարաւոր օրինակներ

Հարցուցէք Կ. Պոլիս, Մարգարեան գրատուն եւ ուղեցէ՛ք :

Դասագիրք Թուազիտութեան

ի պէս նախակրթարանաց

Տ. ՊՕԶՍՃԵԱՆԻ

Գիւր 5 դրոս

Գ. Ա. ՄԱԼԱՅԵԱՆ

ՉԵՒԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՉՆՆԱԿԱՆ մեքոսով

Ձեւել եւ յօրինել

Գիւր 5 դրոս

Հանրագիտակ կը ծախուի ամեն լրագրավաճառաց քով, մասնաւորաբար

Մազրի-Գիւղ, Պօզոս ԷՔ. Ալնուորեանի խանութը :

Գատը. Գիւղ, Լեւոն ԷՔ. Զպուքճեան Դեղարանը :

Սկիւտար, Փիշթօֆճեան ԷՔ. ի խանութը :

Բերա, Դեժ փողոց Դառնիկ ԷՔ. Կիւլէրեանի խանութը :